ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
23.07.2009թ. վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին
ՀՀ ք. Մարտունի երկու հազար տասնհինգ թվականի սեպտեմբերի ութին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ, ՀԱՍՑԵՆ Ք. ՄԱՐՏՈՒՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 2 (երկու), ի դեմս Գևորգ Ռազմիկի Վարդանյանի, հաշվ. Մարտունի, Սայաթ-Նովա փ. , 3 (երեք) տ., որը գործում է 08.09.2015թ տրված № 37 լիազորագրի հիման վրա,
այսուհետ՝ «ԿՈՂՄ-1», մի կողմից և
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ք.Երևան , փ. Մելիք- Ադամյան 1(մեկ) , ի դեմս Սիմակ Միշայի Խոստեղյանի, հաշվ. Գեղարքունիքի մարզ, գյուղ Սարուխան, որը գործում է 07.09.2015թ. տրված № 7965/18 լիազորագրի հիման վրա,
այսուհետ «ԿՈՂՄ-2», մյուս կողմից,
կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1. Ելնելով փոխադարձ պայմանավորվածությունից և գույքի փաստացի օգտագործումից, հիմք ընդունելով Մարտունու քաղաքապետի 08.09.2015 թվականի № 107 որոշումը, «Կողմերը» որոշել են 23.07.2009թ. կնքված ս/մ 1657 անշարժ գույքի վարձակալության պայմանագրում, վավերացված Մարտունու տարածքային նոտար՝ Սուսաննա Վարիկի Մելքոնյանի կողմից, (այսուհետ Պայմանագիր), կատարել հետևյալ փոփոխությունները.

2.Պայմանագրի 1.2 կետում նշված « ք.Մարտունի , փ. Շահումյան 2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկից 296.6քմ ընդհանուր մակերեսով և 4-րդ հարկից 60.0քմ ընդհանուր մակերեսով տարածքը» փոփոխել և դարձնել նշված հասցեի վարչական շենքի 1-ին հարկից № 34 սենյակը 14.6քմ մակերեսով և № 35 սենյակը 16.0քմ մակերեսով, ընդամենը 30.6քմ մակերեսով և 2-րդ հարկից № 19 սենյակը 12.3քմ մակերեսով և № 20 սենյակը 33.2քմ մակերեսով, ընդամենը 45.5քմ , մուտքը և միջանցքները ընդհանուր օգտագործման (համաձայն գծագրի):

2.1. Պայմանագրի 1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝«Վարձատուն պարտավորվում է վարձակալին հանձնել հետևյայ գույքը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Մարտունի Շահումյան փողոց, թիվ 2 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկից № 34 սենյակը 14.6քմ մակերեսով և № 35 սենյակը 16.0քմ մակերեսով ընդամենը 30.6քմ մակերեսով և 2-րդ հարկից № 19 սենյակը 12.3քմ մակերեսով և № 20 սենյակը 33.2քմ մակերեսով, ընդամենը 45.5քմ , մուտքը և միջանցքները թողնելով ընդհանուր օգտագործման (համաձայն գծագրի), կ/հ 05-003-022-001, որպես ՀՀ ֆինանսների նախարարության հարկային ծառայության աշխատասենյակներ օգտագործելու համար»:

3. Պայմանագրի 2.5 կետում շարադրված վարձավճարի չափը փոփոխել և «..... տարեկան 2.139.600 (երկու միլիոն մեկ հարյուր երեսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարը փոխել և դարձնել ամսական 53.270 (հիսուներեք հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ ;

3.1. Պայմանագրի 2.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «.....վարձավճարի չափը կազմում է ամսական 53.270 (հիսուներեք հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ գումար»:

4.Պայմանագիր 2.5.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ ՝ « Կողմերի փոխադարձ համաձայնությամբ վարձակալը պարտավորվում է վարձավճարը վճարել եռամսյակի կտրվածքով , յուրաքանչյուր եռամսյակի համար ոչ ուշ, քան եռամսյակին հաջորդող ամսի 10-ը , վարձատուի հաշվեհամարին , սկսած 2015թ. հունվարի 1-ից, նկատի ունենալով, որ նշված գույքը վարձակալի կողմից փաստացի օգտագործվել է ս/թ հունվարի 1-ից» :

5. Պայմանագրի 2.9 կետում կատարել հետևյալ փոփոխություն և շարադրել «..... գույքը վարձակալության է տրվում անորոշ ժամկետով»:

6. Պայմանագրի և 18.11.2014թ. կողմերի միջև կնքված պայմանագրի փոփոխության մասին համաձայնագրի մնացած կետերը մնում են անփոփոխ:

7. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում «Կողմերի» կողմից այն ստորագրելու և նոտարական վավերացում կատարելու պահից և ենթակա է գրանցման համապատասխան մարմնում:

8. Սույն համաձայնագրի, ինչպես նաև պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են՝ բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

9. Սույն համաձայնագրում «Կողմերի» չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ: Սույն համաձայնագրով «Կողմերի» լրացված պարտավորության կատարմանը «Կողմերը» ձեռնամուխ են լինում անհապաղ:

10. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով հինգ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է Մարտունու տարածքային նոտարական գրասենյակում, մյուս օրինակները տրվեց «Կողմերին»:

«ԿՈՂՄ-1»
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ, ԼԻԱԶ.ԱՆՁ
ԳԵՎՈՐԳ ՌԱԶՄԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀԱՇՎ. ՄԱՐՏՈՒՆԻ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱ Փ. 3Տ.
ԱՆՁՆԱԳԻՐ AM0616433, ՏՐՎԱԾ
27.01.2012Թ., 043-ից

«ԿՈՂՄ-2»
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԼԻԱԶ
ՍԻՄԱԿ ՄԻՇԱՅԻ ԽՈՍՏԵՂՅԱՆ
ՀԱՇՎ.ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ՍԱՐՈ ՎԿ
ԱՆՁՆԱԳԻՐ AH0266700, ՏՐՎԱԾ 01.11.2006Թ
040-ից

Երկու հազար տասնիինգ թվականի սեպտեմբերի ութին, սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ Մարտ
տարածքային նոտար՝ Սուսաննա Վարիկի Մելքոնյանի կողմից:
Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությ
ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՍԵՂԱՆԱՄԱՏՅԱՆՈՒՄ 2600
ԳԱՆՁՎԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՈՎ
ՀՀ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԵՎ ՀՀ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔԻ» 15 ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՆՈՏԱՐ

ՀՀ
քա